Սերոբ Բեջանյան

Ծննդյան թիվն ու վայրը՝

Ծնվել 1972թ. դեկտեմբերի 29, Էջմիածին:

Կրթություն՝

1991-1996թթ. ԵՊՀ, միջազգային հարաբերությունների ֆակուլտետ, միջազգայնագետ-պատմաբան,

2001թ. Նիդերլանդների միջազգային հարաբերությունների թագավորական ինստիտուտի դասընթաց (Նիդերլանդներ, Հաագա),

2004թ. Ջորջ Մարշալի անվան անվտանգության խնդիրների ուսումնասիրության կենտրոնի դասընթաց (Գերմանիա, Գարմիշ-Պարտենկիրխեն),

2005թ. ԱՊՀ երկրների հետ տեխնիկական համագործակցության եգիպտական հիմնադրամի կողմից կազմակերպված դիվանագիտական դասընթաց (Եգիպտոս, Կահիրե),

2010թ. Էստոնիայի ԱԳՆ և Եվրոպական հանձնաժողովի դասընթաց (Էստոնիա, Տալին),

2010թ. ԱՄՆ կառավարության «Մերձավոր Արեւելք - Հարավային Ասիա. Ռազմավարական հետազոտությունների կենտրոնի» բարձրաստիճան պաշտոնյաների դասընթաց (ԱՄՆ, Վաշինգտոն),

2012թ. ՆԱՏՕ-ի պաշտպանական քոլեջի «Ավագ դասընթաց» (Իտալիա, Հռոմ),

2019թ. Ջորջ Մարշալի անվան Անվտանգության հետազոտությունների եվրոպական կենտրոն, բարձրաստիճան պաշտոնյաների դասընթաց (Գերմանիա, Գարմիշ-Պարտենկիրխեն):

Աշխատանքային գործունեություն՝

1998թ. մայիս-օգոստոս ԱԳՆ քաղաքական վարչության 3-րդ քարտուղար,

1998-2003թթ. ԱԳՆ գործադիր քարտուղար,

2003-2004թթ. ԱԳՆ հասարակության հետ հարաբերությունների վարչության տեղեկատվության բաժնի 1-ին քարտուղար,

2004-2006թթ. ԱԳՆ մամուլի և տեղեկատվության վարչության տեղեկատվության բաժնի վարիչ,

2006-2007թթ. Հունաստանում ՀՀ դեսպանության 1-ին քարտուղար,

2007-2009թթ. Հունաստանում ՀՀ դեսպանության խորհրդական,

2009-2014թթ.	ԱԳՆ քարտուղարության խորհրդական,
2014-2016թթ.	ՆԱՏՕ-ում ՀՀ առաքելության խորհրդական,
2016-2018թթ.	ՆԱՏՕ-ում ՀՀ առաքելության արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար,
2018թ. հունիս-հոկտեմբեր	ԱԳՆ սպառազինությունների վերահսկման և միջազգային անվտանգության վարչության խորհրդական,
2018-2022թթ.	ՀՀ ԱԳՆ լրատվության և հանրային դիվանագիտության վարչության պետ:

2022թ. հուլիսի 11-ի ՀՀ նախագահի հրամանագրով նշանակվել է Ինդոնեզիայի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան:

Դիվանագիտական աստիճան՝

արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար:

Օտար լեզուների իմացություն՝

ռուսերեն, անգլերեն:

Ընտանեկան կարգավիճակ՝

ամուսնացած է, ունի դուստր և որդի:

Զինապարտություն՝

1996-1998թ. ծառայություն ՀՀ զինված ուժերում, պահեստազորի սպա: